



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«29 » 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000018

Ձեռնարկողը՝

Քաղաքացի Ա. Արամյան
Ք. Չարենցավան, 6-րդ թաղ. 262.

Գործունեությունը՝

Զարենցավան համայնքի Տերվիշյան փողոց թիվ 11
հասցեում նախագիծներում ԱԳԼԾ կայանի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

Կողայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊԲԸ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Մանուկյան

Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՍԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 000018

<<29 >> 02 2020թ.

**Զարենցավան համայնքի Տերվիշյան փողոց թիվ 11 հասցեում
նախադեսվող ԱԳԼՃ կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայդ**

Ներածական մաս

Ձեռնարկող՝

քաղաքացի Ա. Արամյան

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Կոտայքի մարզ, Զարենցավան համայնք

Ավտոգազալիցքավորման ճնշակայանի (ԱԳԼՃԿ) կառուցման նախագիծը նախատեսվում է հրականացնել Կոտայքի մարզի Զարենցավան համայնքի Տերվիշյան փողոց թիվ 11 հասցեում՝ քաղաքացի Ա. Արամյանի կողմից:

Նկարագրական մաս

Նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով պատկանող, բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակություն ունեցող կառուցապատ տարածքը վերակառուցել ավտոգազալիցքավորման ճնշակայանի, ավտոտեխսպասարկման կետերի, որտեղ հրականացվելու է ավտոդողերի բալանսավորում, վոլվանացում և մեքենաների ախտորոշում (դիագնոստիկա):

Տարածքը գտնվում է բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում՝ 0.4125հա, տարածքում առկա շենք շինությունների մակերեսը կազմում է 1169.1քմ: ԱԳԼ ճնշակայանի հեռավորությունը գոյություն ունեցող ճանապարհների մոտակա հատումից կազմում է՝ մոտքի մասը 52.7մ, ելքի մասը՝ 53մ, ստորգետնյա բունկերի հեռավորությունը բնակելի շենքերից 110մ, եկեղեցուց 94մ, մոտակա հողատարածքից՝ 63մ, իսկ հասարակական շինությունից՝ 107,1մ:

ԱԳԼ ճնշակայանը նախատեսվում է 9 առանձին շինություններից՝ և սեփական գազի մատակարարման լցայունակներից: Գոյություն ունեցող շինությունները նախատեսվում է



վերակառուցել՝ վարչական, օպերատորական, ճնշակայան, սպասարահ, սրճարան, սանհանգոյցներ և ավտոտեխսպասարկման կետեր: Նախատեսվում է 3 երկփողանիքնական գազի լցայունակներ մետաղական ծածկոցով, 2 հակահրդեհային հիդրանտ, 630 կՎԱ էլեկտրական ենթակայան, ստորգետնյա գազի կուտակիչների 6 հոր՝ 400խմ տարողությամբ տարաների համար, ինչպես նաև շանթապաշտպան երկու աշտարակ: Մեքենաների սպասարկման մասնաշենքը և էլեկտրավահանային ծածկը, լցայունակների ծածկը նախատեսվում է թեթև մետաղական կոնստրուկցիաներով:

Համաձայն նախնական գնահատման հայտի գազալցակայանի շինարարական աշխատանքները տևելու են 9 ամիս: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ թնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքի ջոցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Զրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է տարածքում առկա ջրագծի և կոյուղագծի միջոցով՝ «Վեռլիա Ջուր» ընկերության հետ նախօրոք կնքված պայմանագրի հիման վրա: Արտադրական ջրապահանջը կազմելու է $112.5\text{m}^3/\text{շին}$. ժամ. կամ $0.75\text{m}^3/\text{օր}$, բանվորներինը՝ $38.07\text{m}^3/\text{շին}$. ժամ. կամ $0.141\text{m}^3/\text{օր}$, ընդամենը ջրօգտագործումը կկազմի $120.57\text{m}^3/\text{շին}$. ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային և շինարարական աղբի տեսքով: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում առաջանալու է 20m^3 հողային հանույթ, որն օգտագործվելու է տեղում՝ որպես հետլիքը: Իսկ վերակառուցման աշխատանքների ժամանակ առաջացած 1600կգ շինարարական աղբը կտեղափոխվի հատկացված վայր՝ համայնքի հետ պայմանագրային հիմունքներով:

Հահագործման փուլում ԱԳԼ ճնշակայանի գազամատակարարումը կատարվելու է քաղաքային գազատարից՝ $O=500\text{m}^3/\text{ժամ}$ ծախսով և $P=0.5 \div 0.55\text{ՄՊա}$ ճնշմամբ տարածքում առկա ստորգետնյա գազատարից՝ 159մմ տրամագծով, 6մ երկարությամբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում (ԱԳԼ ճնշակայանի տարածքը կանաչապատված է՝ 1240քմ) ԱԳԼ ճնշակայանի և կից փողոցի սահմանաեզրով գոյություն ունեցող պատի վրայով նախատեսվում է բարձրացող բույսի տեսակներով կանաչապատում: Տարածքի ոռոգման նպատակով ջուրը կրերվի ավտոցիւտեռներով՝ պայմանագրային հիմունքներով:

Ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ վերակառուցման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, թափոնների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառում են:

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջոցան,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների սպասարկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,
- փակ ծածկով մեքենաներով շինարարակ նյութերի ստուգի հիմքում:



- փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ համապատասխան բարձրության թաղանթով սորուն նյութերի պահեստների ծածկում,
- ջրանի ծավալների այնպիսի հաշվարկ, որը բացառի փոշենստեցման նպատակով մակերևութային հոսքերի առաջացում,
- տարածքի հոսքերի միավորում մեկ բակային ցանցում և միացում սելավային ջրացանցին,
- տեղումներից առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական իրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 10խմ ծավալով տարրողություն, որի ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով շինարարական աշխատանքների իրականացման մակերեսը՝ 500քմ: Պարզաբանում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կիեռացվի որպես շինաղ,
- բետոնապատ մակերեսի վրա շինարարական նյութերի տեղադրում,
- ցերեկային ժամերին շինարարական աշխատանքների իրականացում և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում,
- շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբի պահում պոլիէթիլենային պարկերում հարթակի վրա և շինարարական աշխատանքների ավարտից հետո դրա տեղափոխում համայնքի կողմից հատկացված վայր,
- աշխատանքների ավարտից հետո տարածքի մաքրում և բարեկարգում:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեությունը կատարվելու է անթրոպոգեն ազդեցության ենթարկված գոտում, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Համաձայն նախնական գնահատման հայտի՝ ԱԳԼԾԿ-ն կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են քաղաքաշինության, անշարժ գույքի կադաստրի կոմիտեները, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, որոնց դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է: Հայտում առկա է ճարտարապետահատակագծային առաջադրանքը, տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացությունը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Զարենցավան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել ՀՀ Ն. 11.05.02-99, ՀՀ Ն. 11.03.01-04 շինորմերի և 2005թվականի դեկտեմբերի 22-ի



«Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N2399-Ն և 2008թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազայիցքավորման ճնշակայանների կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N1101-Ն «Հաղորդական որոշումներով և 2014թվականի հոկտեմբերի 14-ի «Քաղաքաշինություն. քաղաքների և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» քաղաքաշինության նախարարի N263-Ն հրամանով, «Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտություն կետերում սանհանգույցներին սահմանված պահանջները և շինարարական նորմերը, դրանց հիման վրա հայտում ամրագրված պայմանները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Ա. Արամյանի կողմից ներկայացված կոտայքի մարզի Զարենցավան համայնքի Տերվիշյան փողոց թիվ 11 հասցեում նախատեսվող ԱԳԼԾԿ վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնակիչ



Հ. Ալեքսանյան